ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/17

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Միասնական սոցիալական ծառայություն
Մասնակից՝ «Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸի տնօրեն՝ Էդ. Թովմասյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, անվտանգության ապահովման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.01.2022թ.-ի թիվ 26/26-1/634-2022 գրությամբ «Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Միասնական սոցիալական ծառայության 07.01.2022թ. թիվ 02/ԳՋ/530-2022 գրության հիման վրա, 14.01.2022թ.-ին «Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 14.01.2022թ.-ին:

17.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/17 համարի ծածկագիրը:

26.01.2022թ.-ին և 11.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.02.2022թ.-ին:

2. Միասնական սոցիալական ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Միասնական սոցիալական ծառայությունը 07.01.2022թ. թիվ 02/ԳՋ/530-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու) հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2021 թվականի հոկտեմբերի 27-ին Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1 ծածկագրով հայտարարվել է Ծառայության կարիքների համար անվտանգության ապահովման ծառայությունների գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով յոթ կազմակերպություն՝ այդ թվում «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն): Գնահատող հանձնաժողովի 2021թ. նոյեմբերի 8-ի որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

2021 թվականի նոյեմբերի 25-ին «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 որոշմամբ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժվել է, որից հետո (eauction.armeps.am) համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում Ընկերությանը ուղարկվել է ծանուցում պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ծանուցումը ստանալուց հետո Ընկերությունը հրավեր 1-ին մասի 9.3 կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Գնահատող հանձնաժողովի 2022թ. հունվարի 4-ի որոշմամբ ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեզ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 17.01.2022թ.-ի գրությամբ դիմել է «Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2022թ.-ի թիվ 26/26-1/634-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ն 09.02.2022թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«<Լիոն Սեքուրիթի Սերվիս> ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ դեմ և սա 13,12,21թ-ի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 որոշմամբ <Լիոն Սեքուրիթի Սերվիս> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժվել է: Որոշումը հրապարակվել է gnumner.am կայքում 14.12.21թ-ին:

Որից հետո առ 04.01.22թ-ին ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ կողմից սաացվել է էլեկտրոնային նամակ որտեղ գրված է որ ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1 ծածկագրով հրապարակվել է նոր արձանագրություն:

Արձանագրության մեջ նշվում էր, որ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ (eauction.armeps.am) համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ընկերությանը ուղարկվել է ծանուցում պայմանագիր կնքելու վերաբերյալ: Ծանուցումը ստանալուց հետո Ընկերությունը հրավերի 1-ին մասի 9.3 կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել որակորման և պայմանագրի ապահովումները և զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ուրեմն պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցումը Պատվիրատուն պետք է ուղարկեր 14.12.21թ-ից միչև 18.12.21թ-ի ընկած ժամանակահատվածում, որպեսզի 2022թ-ի հունվարի 3-ի օրվա դրությամբ ՀՀ գնումների մասին օրենքի 38 հոդվածի 3-րդ կետի համաձայն եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում որակորման և պայամանգրի ապահովումները ապա նա գրկվում է պայմանգիր ստորագրելու իրավունքից/ լրանար 10 աշխատանքային օրը: Բայց ընկերությունը նման ծանուցում չի ստացել:

Եթե համակարգի միջոցով ուղարկվում է ծանուցում, ապա ծանուցում ստացող ընկերությունը համակարգից պետք է ստանա էլեկտրոնային նամակ այդ ծանուցման մասին, բայց ընկերությունը էլ. փոստի միջոցով չի ստացել ծանուցում պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Այդ նույն ձևով համակարկի միջոցով Պատվիրատուն ուղարկել էր մի քանի ծանուցումներ և այդ ծանուցումները ստացվել էին մեր ընկերություն կողմից: Մասնաորապես՝

1 առ 08.11.21 թ-ին ուղարկած ծանուցումը անգործության ժամկետի սկսելու մասին- էլ. Փոստի սքրինը կցվում է

2. առ 19.11.21 թ-ին ուղարկված ծանուցումը պայմանագիր կնքելու վերաբերյալ - էլ. Փոստի սքրինը կցվում է

3. առ 04.01.22 թ-ին ուղարկված ծանուցումը արձանագրություն | հրապարակվել է նոր արձանագրություն - էլ. Փոստի սքրինը կցվում է

Մեր ընկերությանը ուղարկվել է Auaction համակարգից դուրս բերված փաստաթուղթ առ 24.11.21 թ-ի շնորհման մասին:

Խնդրում ենք ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ նույն ձևի փաստաթուղթ ներկայացնի 14.12.21 թ-ից միչև 18.12.21 թ-ի ընկած ժամանակահատվածի համար»:

4. <u>ՍՑ-LO-2022/17 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Միասնական սոցիալական ծառայության կողմից անվտանգության ապահովման ծառայությունների ձեռքբերման նպատակով 27.10.2021թ.-ին հայտարարվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 08.11.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ն:

v. 08.11.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է

պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

vi. Պատվիրատուն 19.11.2021թ.-ին eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցի 0099555587@mail.ru էլ. փոստի հասցեին է ներկայացրել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը:

vii. Պատվիրատուն 24.11.2021թ.-ին eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացրել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով անվտանգության ապահովման ծառայությունների գնման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. նոյեմբերի 8-ի որոշմամբ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես ընտրված մասնակից: Հիմք ընդունելով վերոգրյալը կից ներկայացնում ենք «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ որը Ընկերության հետ կարող է կնքվել «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում խնդրում ենք նշված հրավերով սահմանված ժամկետում՝ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո կից գրությամբ ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները և Մասնակցի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված պայմանագրի օրինակը, կամ Մասնակցի կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները:

viii. «Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ն 25.11.2021թ.-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոք և խնդրել է վերոնշյալ մրցույթի բանակցային գործընթացը չեղյալ համարվի և հրավիրել բոլոր մասնակիցներին նոր բանկցությունների, բայց անձնական, առանց աճուրդային /համակարգչով/ համակարգի: «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Քանի որ առաջարկվող պայմանագրի գինը, որը կազմում է 420.240 /չորս հարյուր քսան հազար երկու հարյուր քառասուն/ ՀՀ դրամ, պակաս է ինքնարժեքից, պահանջում ենք պայմանագիրը չեղյալ համարել: Միասնական սոցիալական ծառայություն կողմից տրված նախահաշվային գինը, կազմում էր 10.000.000 /տաս միլիոն ՀՀ դրամ, որը անհամեմատելի է 350.200 /երեք հարյուր հիսուն հազար երկու հարյուր/ ՀՀ դրամից: Հիմնվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների

արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից առաջարկում եմ պայմանագիրը ճանաչել անվավեր: Ապացույցներ Մասնակիցը չի կարող ներկայացնի, քանի, որ գնման գործընթացը տեղի էր ունեցել համակարգի միջոցով: Ուստի միջնորդել է բողոք քննող անձին, որպեսզի նա հարցում կատարի համակարգը սպասարկողին:

ix. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանը 13.12.2021թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 որոշմամբ (հրապարակվել է www.gnumner.am կայքում 14.12.2021թ.-ին) որոշել է «Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ի կողմից 25.11.2021թ.-ին ներկայացված բողոքը մերժել:

x. Հանձնաժողովի 04.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նախագահը ներկայացրել է, որ «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից՝ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն 2021 թվականի նոյեմբերի 25-ին ներկայացրել է բողոք: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 որոշմամբ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժվել է, որից հետո (eauction.armeps.am) համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում Ընկերությանը ուղարկվել է ծանուցում պայմանագիր կնքելու վերաբերյալ: Ծանուցումը ստանալուց հետո Ընկերությունը հրավերի 1-ին մասի 9.3 կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները և զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

xi. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, հրավերով սահմանված պահանջների համաձայն, որոշել է «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2022թ.-ի թիվ 26/26-1/634-2022 գրությամբ «Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Կենտրոնացված կարգով սննդամթերքի գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից

հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, կենտրոնացված կարգով սննդամթերքի գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Միասնական սոցիալական ծառայության կողմից անվտանգության ապահովման ծառայությունների ձեռքբերման նպատակով 27.10.2021թ.-ին հայտարարված «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 որոշմամբ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժվել է, որից հետո (eauction.armeps.am) համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում Ընկերությանն ուղարկվել է ծանուցում պայմանագիր կնքելու վերաբերյալ: Ծանուցումը ստանալուց հետո Ընկերությունը հրավերի 1-ին մասի 9.3 կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել

որակավորման և պայմանագրի ապահովումները և զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Նման պայմաններում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հրավերով սահմանված պահանջների համաձայն, որոշել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, ուսումնասիրելով գործում առկա փաստերին ու Պատվիրատուի և Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշումները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գործում առկա չէ ապացույց առ այն, որ Մասնակցին

(eauction.armeps.am) համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ուղարկվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում՝ վերջինիս 25.11.2021թ.-ին ներկայացրած բողոքը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 որոշմամբ մերժվելուց հետո:

Ուստի, նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2022թ.-ի թիվ 26/26-1/634-2022 գրությամբ «Լիոն սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/17 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**